Ս. Տեր-Ներսեսյանի ֆրանսերեն այս հոդվածը լույս է տեսել 1986 թ. Հայկ Բերբերյանի հիշատակին նվիրված հոդվածների ժողովածուում՝

S. Der Nersessian, Les portraits d'Esayi Nč'ec'i, supérieur de Glajor, in Armenian Studies *(Études Arméniennes) in Memoriam Haïg Berbérian, ed. D. Kouymjian, Lisbon, Galouste Gulbenkian Foundation, 1986, pp. 229-241.*

Թարգմանության ժամանակ հարազատ ենք մնացել բնագրին՝ անհրաժեշտության դեպքում փոխոխություններ անելով միայն հայերեն շարադասության համաձայն:

Թարգմանիչ՝ ***Խաչիկ Հարությունյան***

ԳԼԱՁՈՐԻ ՐԱԲՈՒՆԱՊԵՏ ԵՍԱՅԻ ՆՉԵՑՈՒ ԴԻՄԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Սիրարփի Տեր-Ներսեսյան

Ժամանակակից մարդկանց պատկերները հաճախ են զարդարում հայկական ձեռագրերը, որոնց պատվիրատուները նախընտրում էին ներկայանալ Քրիստոսին ձեռագիր նվիրելիս, և ինչպես հաճախ է նշվում հիշատակարաններում, ձեռագիրը Տիրոջ առջև մի յուրատեսակ միջնորդ էր հանդիսանում: Այդ պատկերները երբեմն ուղեկցվում էին աստվածային ողորմությունը հայցող աղոթքներով, որոնց պատասխանը գտնում ենք XII դ. մի ձեռագրում, ուր Քրիստոսի կողքին գրված են Եսայի մարգարեի հետևյալ խոսքերը. «Ե՛ս եմ, ե՛ս եմ այն նույնը, որ ջնջում եմ իմ հանդեպ կատարած քո անօրինությունները և քո մեղքերն այլևս չեմ հիշելու» (Եսայի, 43:25)[1]:

Երբեմն մանրանկարներում ծաղկողներն ավելացնում էին նաև իրենց ինքնանկարները՝ մասշտաբով ավելի փոքր և մեկուսի, իսկ ընդօրինակվող երկերի հեղինակների պատկերները խիստ հազվադեպ են, նկատի չունեմ ուշ շրջանի այնպիսի մանրանկարներ, ինչպիսին Գրիգոր Նարեկացու կամ Ներսես Շնորհալունն են, որոնք հանդիպում են XVI-XVII դդ. ձեռագրերում, այլ այն մանրանկարները, որոնք արված են որևէ հեղինակի կենդանության օրոք: Այս տեսանկյունից հատուկ ուշադրության են արժանի Սյունյաց նահանգի մտավոր կենտրոն և ժամանակակիցների կողմից համալսարան կամ նույնիսկ երկրորդ

[1] S. Der Nersessian, *L'art arménien*, Paris, 1977, p. 129, և նկ. 90:

Աթենք անվանված [2] Գլաձորի վանքի րաբունապետ Եսայի Նչեցու դիմապատկերները, որոնք արդյունք են որոշակի հանգամանքների: Որպես գիտնական և հատկապես ուսուցիչ՝ Եսային բարձր է գնահատվել իր ժամանակակիցների կողմից, եղել է արվեստների հովանավոր, նրա րաբունապետության տարիներին (1284-1338) մանրանկարչական արվեստն այստեղ մեծ վերելք է ապրել[3]:

Կառանձնացնեի նախևառաջ երկու մանրանկար, մեկը՝ Նչեցուն ժամանակակից, որ հայտնի է միայն համառոտ նկարագրությամբ, մյուսը՝ հետագայի: Մինչ ավելի ամբողջական մեկ այլ օրինակի անցնելը, ճիշտ կլինի նախ անդրադառնալ այս երկու մանրանկարներին, քանի որ դրանք հանդիպում են Եսայի Նչեցու կազմած «Քերականության մեկնություն» աշխատանքի առաջին էջերին: Դրանցից առաջինը գտնվում էր Մշո Առաքելոց վանքի Հմր 14 ձեռագրում՝ ընդօրինակված 1311 թ. Հերմոնի վանքում Եսայի Նչեցու հոգեզավակ Տիրացու նախասարկավագի համար: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին անհետացած այս ձեռագրի [4] համառոտ նկարագրության համաձայն՝ Եսային պատկերված էր նստած դիրքով՝ հովվական գավազանը ձախ ձեռքին, իսկ աջ ձեռքը մեկնած դեպի ծնկած դիրքով երկու սարկավագները, որոնցից մեկը ձեռքին պահում էր մի տախտակ՝ «Աստված մեծ է» մակագրությամբ, իսկ նկարի ներքևում գրչի անունը՝ անպիտան Թորոս: Այս «Քերականության մեկնության» վերջի հիշատակարանը կրկնում է նախագաղափար օրինակինը, որ 1309 թ. Գլաձորում եղած ժամանակ Եսայի Նչեցու պատվերով ընդօրինակել էր Խապար մականվանյալ Բջնու արքեպիսկոպոս տեր Գրիգորը[5]: Ուստի՝ հնարավոր է, որ Մուշի գրչագրի մանրանկարը ևս կրկնօրինակված է եղել այդ նախօրինակից:

---

[2] Գ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ*, Անթիլիաս, 1969, էջ 251-296: Լ. Գ. Խաչերյան, *Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի մեջ (XIII-XIV դդ.)*, Երևան, 1978:

[3] Ա.Ն. Ավետիսյան, *Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը*, Երևան, 1971:

[4] Ս.Ա. Մուրատեան, Ն.Պ. Մարտիրոսեան, *Յուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի եւ շրջակայից*, խմբագրեց Ա. Գալայճեան, Երուսաղէմ, 1967, էջ 17:

[5] Նշվ. աշխ., էջ 17, հիշ. Բ:

Նչեցու երկրորդ պատկերը գտնվում է Երուսաղեմի հայոց պատրիարքարանի Հմր 1145 ձեռագրում, որն ընդօրինակվել է 1614 թ. Ամիդում[6] (նկ. 1): Եսային պատկերված է վանականի կնգուղը գլխին, մեծ գահին բազմած, հովվական գավազանը ձախ ձեռքին, աջը պարզած դեպի ծնկած աբեղաները, որոնցից մեկի ձեռքին բացված գալարակ է: Մանրանկարը վերնագրված է «Ռաբունապետն մեր Եսայի», որ գրված է էջի վերևում: 296 էջին առկա տեղեկության համաձայն՝ «Քերականության մեկնությունը» ընդօրինկված է Եսայի Նչեցու կազմած բնօրինակից, և շատ հնարավոր է, որ այս պատկերը նույնպես, որի ոճը զգալիորեն տարբեր է XVII դ. նկարչությունից, կրկնօրինակված է բնօրինակից, ինչպես Մշո ձեռագրի մանրանկարի դեպքում:

Պետք է նշել, որ Նչեցու այս մանրանկարները չեն արտահայտում գրող մարդու ավանդական տեսակը, այլ պատկերում են իր աշակերտներին դասավանդող ուսուցչին: Նույն բանաձևն ավելի զարգացված հանդիպում է Երուսաղեմի հայոց պատրիարքարանի Հմր 365 ձեռագրի սկզբում (նկ. 2): Մատյանն ընդօրինակված է 1299 թ. Կիլիկիայում և պարունակում է Գևորգ Սկևռացու կողմից կազմված «Եսայի մարգարեի մեկնությունը»: Այն Նչեցուն է ուղարկել Կեսարիայի Կոստանդին եպիսկոպոսը, որի մասին տեղեկանում ենք հիշատակարանում գրված Կոստանդինի նամակից, ուր վերջինս նշում է, որ Նչեցուն է ուղարկում խոստացված «Մեկնությունը», և խնդրում է իրեն հիշել աղթոքներում, ապա ավելացնում, որ ձեռագիրը կազմված չէ[7]: Այս նամակը, որ թվագրված չէ, վստահաբար գրված է 1309 թ. առաջ, թվական, երբ Կոստանդինն ընտրվեց կաթողիկոս, և 1305 թ. հետո, երբ Կոստանդինը եկել էր Հայաստան: Վերջինիս միջոցով կաթողիկոս Գրիգոր Անազարբացին Եսայի Նչեցուն էր փոխանցել Ներսես Շնորհալու գործերի մի ժողովածու[8]: Հավանաբար հենց այս այցելության ժամանակ էլ Կոստանդինը Եսայի Նչեցուն խոստացել էր ուղարկել «Եսայի մարգարեի մեկնություն»-ը:

---

[6] Ն. Պողարեան, *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, հ. 4, Երուսաղէմ, 1969, էջ 232-3:

[7] Ն. Պողարեան, *նշվ. աշխ.*, հ. 2, Երուսաղեմ, 1967, էջ 269-271:

[8] Ձեռագիր նշումն ավելացված է գրչագրի մեջ անձամբ կաթողիկոսի կողմից, ՄՄ, Հմր 500: Լ. Խաչիկյան, *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, Երևան, 1950, էջ 35:

Երուսաղեմի Հմր 365 ձեռագրի համար որպես առաջնաթերթ ծառայող դասավանդող Նչեցու այս պատկերը, գրչագրի բովանդակության հետ որևէ առնչություն չունի (նկ. 2): Վստահաբար այն չի արվել նախքան Գլաձոր ուղարկվելը, քանի որ ոչ միայն տարբեր է XIV դարասկզբի կիլիկյան մանրանկարիչների ոճից, այլև Կոստանդին Կեսարացին էլ չէր մոռանա այն նշել, եթե արած լիներ Նչեցու համար: Հետևաբար մանրանկարն ավելացվել է Գլաձորում, երբ գրչագիրը Նչեցու սեփականությունն է դարձել և կազմվել: Էջի վերևի ձախ անկյունում բազմել է Եսային՝ հովվական գավազանը ձեռքին, գլխին հոգևորականի սև վեղարն է, դեղին թիկնոցը կապույտ պատմուճանի վրայից[9]: Համեմատելով այս պատկերը XVII դ. Ամիդում արված և վերը մեր հիշած մանրանկարի հետ՝ երևում է, թե որքան հարազատ է մնացել հետագա մանրանկարիչը հին օրինակից ընդօրինակելիս՝ ամբողջությամբ պարզեցնելով այն (հմմտ. նկ. 1 և 2, - հավելումը մերն է):

Երուսաղեմի ձեռագրի մանրանկարում լույսի մի շող է իջնում Եսայու վրա, որ խորհրդանշում է աստվածային ներշնչանքը, իսկ նրա բերանից ելնող գծերի փունջը, խորհրդանշում է ձայնը, որով նա ոգեշնչում է իր աշակերտներին: Վերջիններս պատկերված են էջի երկու կողմերում՝ մեկը մյուսի գլխավերևում, շատերի ձեռքերին կիսաբաց գիրք է՝ կարմիր գծերով սպիտակ կերպասի վրա: Ոստառատ բնով նռնենին ձգվում է էջի կենտրոնով, որի փոքրիկ ճյուղին տեղադրված գրակալի վրա դրված է մի գիրք, և մի ծնկած աբեղա՝ հագին դեղին պատմուճան և շագանակագույն թիկնոց: Մի երիտասարդ, որ անկասկած մանրանկարիչն է, աղոթելու դիրքով ծնկել է մանրանկարի ներքևում՝ ձեռքերը վեր պարզած: Մանրանկարի խորագիրը գրված է էջի վերևը երիզող հատվածում «Ռաբունապետն մեր Եսայի»՝ կրկնված նաև XVII դ. նկարում:

Այս տեսարանը, որտեղ ուսուցիչը մեկնում է աշակերտի կողմից ընթերցված աստվածաշնչյան ինչ-որ հատված կամ եկեղեցու հայրերից որևէ գրվածք, միևնույն ժամանակ խորհրդանշական է, քանի որ Եսային իր ներշնչանքը ստանում էր երկնքից: Նռնենին պատկերում է հավանաբար կենաց ծառը՝

[9] Նկարը գունավոր հրատարակված է *Armenian Art Treasures of Jerusalem*, ed. by B. Narkiss with collaboration M. E. Stone, Oxford, 1980, fig. 92 (հոդվածում նշվող 1, 4 և 6 մանրանկարների բնօրինակները մեզ սիրով տրամադրեց Մատենադարանի *Արվեստի պատմության և գրչության կենտրոնների* բաժնի վարիչ Կ. Մաթևոսյանը, որի համար մեր շնորհակալությունն ենք հայտնում նրան: Մյուս մանրանկարները արտատպել ենք ֆրանսերեն հոդվածից):

դրախտի կենտրոնում: Այն տարբեր է բարու և չարի իմաստության ծառից, որից Աստված արգելեց ուտել: Օրինակ՝ Թորոս Տարոնացու կողմից 1318 թ. ծաղկված Եսայի Նչեցու Աստվածաշնչում կենտրոնում պատկերված են Ադամն ու Եվան բարու և չարի ծառի պտուղը համտեսելիս, իսկ աջ կողմում կարելի է տեսնել նաև մի նռնենի[10]:

Իր այս գաղափարով, բայց ոչ ձևով, Եսայի ռաբունապետի մանրանկարը հիշեցնում է Իմաստության աղբյուրների բյուզանդական հորինվածքները, ինչպես օրինակ՝ Հովհան Ոսկեբերանի Ճառերից մեկի մանրանկարը, որտեղ մագաղաթը, որի վրա գրված են ճառերը, վերածվում է մի աղբյուրի, որից ըմպելու են գալիս մի քանի եպիսկոպոսներ[11]: Սակայն, չնայած խորհրդանշական մանրամասների առկայությանը՝ հայկական մանրանկարը պատմական բնույթ ունի. այն ժամանակակից մարդու պատկեր է և ոչ թե եկեղեցու հայրերից մեկինը:

Երուսաղեմի մանրանկարի խիստ ոճն ավելի մոտ է Թորոս սարկավագի ոճին, ով 1311 թ. ծաղկել է Թավրիզի Սուրբ Աստվածածին եկեղեցում պահվող Հմր 1 Ավետարանը. ընդօրինակման վայրը հիշատակարանում նշված չէ: 1910 թ. հրատարակված Թավրիզի ձեռագրացուցակում Հ. Աճառյանի նշած մանրանկարները և ավետարանիչների պատկերներն անհայտ հանգամանքներում առանձնացվել են ձեռագրից, որից հետո 18 սյուժետային տեսարաններից միայն 10-ը, և չորս ավետարանիչներից միայն երեքի պատկերներն է հնարավոր եղել տարբեր հավաքածուներում գտնվողների հետ նույնականացնել[12]: Այս նկարներում երևում են անձերի նույն պատկերատիպերը՝ ընդգծված դեմքերով և սևածիր աչքերով, ինչպես օրինակ «Տիրամոր նինջը» տեսարանում պատկերված առաքյալները, որոնք խմբավորված են աջ կողմում՝ մեկը մյուսի գլխավերևում, իսկ նրանցից մեկը պահում է մի գիրք

[10] Der Nersessian, *L'art arménien*, fig. 169:

[11] T. Velmans, *«L'iconographie de la "Fontaine de Vie" dans la tradition byzantine à la fin du Moyen Age»*, Synthronon, Paris, 1968, p. 121, et fig. 2.

[12] Հ. Աճառեան, *Յուցակ ձեռագրաց Թաւրիզի,* Վիեննա, 1910, էջեր 70-74: Պարզված մանրանկարների համար տե՛ս, S. Der Nersessian, *The Chester Beatty Library, A Catalogue of the Armenian Manuscripts*, Dublin, 1958, vol. I, pp. XXX-XXXII; S. Der Nersessian, *L'art arménien*, p. 224, և H. Kurdian «An Armenian Miniature of the XIVth century», *The Princeton University Library Chronicle*, IV (1943), pp. 109-112.

ճիշտ այն ձևով, ինչպես Նչեցու աշակերտները[13]: Ծնկած ընթերցողը, որի պատմուճանը, ծնկներից տարածվելով, գծում է եռանկյունի, նմանվում է Աբրահամի պատկերին Զոհաբերության տեսարանում (նկ. 3) կամ Բարեխոսության (Դեիսուսի) տեսարանի հրեշտակներին[14]: Ծառն ունի Աբրահամի զոհաբերության տեսարանի ծառին նման կորություն և տերևների մի փունջ ճյուղերի սկզբներին: Վերջապես, ստորին լուսանցքում ծնկած պատանին հիշեցնում է Թավրիզի ձեռագրում պատկերված Թորոս սարկավագին[15]:

Թորոս սարկավագին այս մանրանկարի վերագրումը, որ առաջարկված է նաև Բ. Նարկիսի կողմից[16], ավելի մեծ հետաքրքրություն ունի, քան սոսկ ծաղկողի նույնականացումը: Այն մեզ ցույց է տալիս, որ Թորոս սարկավագը Գլաձորի գրչության կենտրոնի անդամ է եղել, այնպես, ինչպես նրա անվանակից Թորոս Տարոնացին, քանի որ վստահաբար հենց այնտեղ է արվել դասավանդող Նչեցու պատկերը և ապա կցվել Կոստանդին Կեսարացու ուղարկած ձեռագրին: Կարելի է ապա Գլաձորին վերագրել նաև Թավրիզի Ավետարանը, որի գրչության վայրը նշված չէ հիշատակարանում, և որի պատվիրատու Ծերը նույնպես հայտնի չէ:

Թորոս Տարոնացին իր հերթին ևս պատկերել է Նչեցու դիմանկարներ, սակայն ոչ որպես ուսուցչի. ամեն դեպքում պատկերագրական հորինվածքները կրկին տարբեր են պատվիրատուների համար ընդունված ձևերից: 1318 թ. Նչեցու համար ծաղկված Աստվածաշնչում (ՄՄ, Հմր 206) նա պատկերված է նստած դիրքով համաբարբառային խորաններից մեկի զարդարված ուղղանկյան կողքին. աջ կողմ թեքված՝ ձախ ձեռքին պահում է մի գիրք, իսկ աջ ձեռքը պարզել է դեպի Աստծու օրհնող Աջը, որ դուրս է եկել երկնքի կապույտից (նկ. 4): Այս դիրքը դիմանկարի համար խիստ հազվադեպ է, բայց ոչ բացառիկ. բավական է հիշել 1211 թ. Հաղբատի Ավետարանի խորաններում պատկերված կերպարները[17]: Այստեղ ուշագրավն այն է, որ Եսային կրում է ոչ թե վարդապետների հանդերձ, ինչպես նախորդ պատկերներում, այլ՝ առաքյալների, ավելին, նա լուսապսակով է: Դիմացի էջի հանդիպակաց հատվածում գետնին նստած է մի պատանի՝ ձեռքին

---

[13] S. Der Nersessian, *The Chester Beatty Library*, pp. 31-2.
[14] *Նշվ. աշխ.*, h. II, առաջնանկար:
[15] Տե՛ս, F. Macler, *Documents d'art arméniens*, Paris, 1924, Album, figs. 253, 254, 256.
[16] *Armenian Art Treasures of Jerusalem*, p. 77.
[17] S. Der Nersessian, *L'art arménien*, fig. 164.

մագաղաթե մեծ թերթ, որ կտցում է դեպի ներքև թռչող մի սիրամարգ: Պատանին, անկասկած, պատրաստվում է պատկերել Նչեցուն (նկ. 5): Սակայն պատանին, հանձին որի կարելի է ճանաչել Թորոս Տարոնացուն, ում պատկերը նման է Վենետիկի Մխիթարյանների գրադարանի Հմր 1917 Ավետարանի դիմանկարին[18], մեջքով է նստած Նչեցուն: Արդյո՞ք կարելի է ենթադրել, որ այս երկու պատկերները առանձնացված են մի մանրանկարից, որտեղ վերջիններս եղել են դեմ-դիմաց, և լավ չեն հարմարվել խորանների զարդարմանը: Համանման մի հորինվածք վկայված է Կիլիկիայում ավելի ուշ ծաղկված մի ձեռագրում. Մատենադարանի Հմր 2627 Աստվածաշնչում ծաղկող Սարգիս Պիծակը պատկերված է նստած դիրքով՝ ծնկներին մի տախտակ: Աչքերը հառած իր առջև բազմած Հակոբ կաթողիկոսին՝ պատրաստվում է նկարել վերջինի դիմանկարը[19]:

Թորոս Տարոնացու կողմից արված Եսայի Նչեցու երկրորդ պատկերը գտնվում է 1323 թ. մի Ավետարանում, որ պահվում է Մատենադարանում (ՄՄ, Հմր 6289): Տիրամայրը, Մանուկը գրկին, զարդարում է Մատթեոսի, Ղուկասի և Հովհաննու ավետարանների ճակատային հատվածը: Ղուկասի ավետարանի համապատասխան մասում Տիրամայրը մագաղաթյա մի թերթ է ուղղել Եսայի Նչեցուն, որ հաստատվում է վերջինի գլխավերևում արված գրությամբ, մինչդեռ Հիսուսը նույնից ուղղել է աջ կողմում կանգնած մեկ այլ մարդու, որ, նույն գրության համաձայն, Ներսես վարդապետն է (նկ. 6): Անկասկած, վերջինս Ներսես Մշեցին է, որի հիշատակին Եսային ընդօրինակել էր տվել այդ նույն ձեռագիրը, ինչպես գրված է հիշատակարանում [20] : Այսպիսով, այս մանրանկարում նրանք միավորված են, ինչպես և իրենց կյանքի ընթացքում՝ Ներսեսը՝ որպես Գլաձորի հիմնադիր, Եսային՝ որպես նրան հաջորդող:

Ինչպես տեսնում ենք, Նչեցու բոլոր պատկերները տարբեր են պատվիրատուների կամ մատենագիրների համար ընդունված ձևերից: Շեշտն ամեն անգամ դրված է ներշնչված կամ աստվածային ձեռքով երկնքից օրհնություն ստացող ուսուցչի վրա կամ թղթի, որ դեպի իրեն է պարզում Տիրամայրը: Առաջին անգամ աստվածային ներգործության նշանը, որ

[18] S. Der Nersessian, *Manuscrits arméniens illustrés des XIIe, XIIIe et XIVe siècles de la Bibliothèque des Pères Mekhitharistes de Venise*, Paris, 1937, Album, pl. LIV, fig. 119.
[19] Վ. Ղազարյան, *Սարգիս Պիծակ*, Երևան, 1980, տախտակ IV:
[20] Լ. Խաչիկյան, *ԺԴ դարի հիշատակարաններ*, էջ 182:

առավելապես հատուկ էր ավետարանիչներին, եկեղեցու հայրերին կամ մի պատվելի սրբի, կիրառված է ժամանակակից մի գործչի համար: Չնայած իրենց պարզությանը՝ այս տարբեր պատկերները Գլաձորի ծաղկողների յուրատիպ գործերի մեջ են դասվում:

Դասավանդող ուսուցչի պատկերը Նչեցու աշակերտների և այլ հայտնի հեղինակների մոտ տարբեր կերպ է արտահայտվել՝ կիրառվելով երբեմն այնպիսի ձեռագրերի զարդարման համար, որոնք պարունակում են ոչ թե տվյալ հեղինակների, այլ ուրիշների գործերը: Այսպես, 1334 թ. Երզնկայում ընդօրինակված Պողոս առաքյալի Թղթերի Հովհան Ոսկեբերանի թարգմանության սկզբում Եսայի Նչեցու աշակերտ Կիրակոս Երզնկացին ներկայացված է իր աշակերտներով շրջապատված[21]: Ավելի հետաքրքիր են Գրիգոր Տաթևացու մանրանկարները, ով 1390 - 1410 թթ. ղեկավարել է Հովհաննես Որոտնեցու կողմից հիմնադրված Տաթևի վանական դպրոցը Սյունիքում: Առաջնային մասում նստած է Գրիգորը՝ երկու ձեռքերը հենած իր գավազանին, մինչդեռ իր աշակերտները նստած են գետնին իր կողքին. նրանցից մեկը պահում է կիսաբաց մի գիրք, մյուսներն իրար հետ ինչ-որ բան են քննարկում կամ նայում են իրենց ուսուցչին[22]: Էջի վերնամասը զարդարում են երեք մեդալիոն, որոնք պատկերված են խորքում երևացող կառույցների գլխավերևում. Տիրամայրը Մանկան հետ, զբաղեցնում է կենտրոնական մեդալիոնը, իսկ երկու կողքերի մեդալիոններին պատկերված են սրբապսակյալ Դավիթը՝ ձեռքին մի գիրք, և օրհնող Հովհաննես Մկրտիչը, երկուսն էլ պատկերված կիսով չափ: Մագաղաթի վրա արված այս մանրանկարը գտնվում է 1449 թ. Կաֆայում (Ղրիմ) ընդօրինակված թղթե մի ձեռագրում, որ պահվում է Մատենադարանում (ՄՄ, Հ^{մր} 1203): Շատ հնարավոր է, ինչպես արդեն տեսանք[23], որ այս մանրանկարը, որի ոճը տարբեր է նույն շրջանի Ղրիմի գործիչների ոճից, սերում է Տաթևում ընդօրինակված մեկ այլ ձեռագրից, և արված է նույնիսկ Գրիգոր Տաթևացու կենդանության օրոք: Ինչպես դասավանդող Եսայի Նչեցու պատկերը, Գրիգոր

[21] Գ. Յովսէփեան, *Խաղբակեանք*, էջեր 268-9, ծնթ. 2:

[22] A. Dournovo et R. G. Drampian, *Miniatures arméniennes*, Erévan, 1967, pl. 69.

[23] Լ. Խաչիկյան, *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, մաս I, (1401-1450), Երևան, 1955, էջ 642: Խաչիկյանը ծանոթագրության մեջ նշում է, որ նույն մանրանկարը կրկնված է նաև Մատենադարանի այլ ձեռագրերում, սակայն չի նշում համարները:

Տաթևացունը նույնպես կրկնված է ավելի ուշ շրջանի ձեռագրերում, որոնց մեջ և XVII դ. թվագրվող Երուսաղեմի Հմր 1291 ժողովածուն, ուր կարելի է գտնել միևնույն մանրանկարը՝ միայն առանց վերին հատվածի երեք մեդալիոնների[24]:

Դատելով նշված գործերից՝ կարելի է ասել, որ Գրիգոր Տաթևացու դիմանկարների դեպքում չի եղել պատկերագրական նույն բազմազանությունը, ինչ Եսայի Նչեցու պարագայում: Չնայած իրենց պարզությանը՝ դրանք դասվում են Գլաձորի մանրանկարիչների հետաքրքիր ստեղծագործությունների շարքին:

[24] Ն. Պողարեան, *նշվ. աշխ.*, հ. IV, էջ 499, նկ. 27:

Նկ. 1, Երուսաղեմ, Հփ 1145, էջ 42: Դասավանդող Եսայի Նչեցին:

Նկ. 2, Երուսաղեմ, Հմր 365, 2բ: Դասավանդող Եսայի Նչեցին:

Նկ. 3, Ֆլորենցիա, Ի Տատտի, Բերնարդ Բերենսոնի հավաքածու, 1311 թ. Ավետարանից մի թերթ: Աբրահամի զոհաբերությունը:

Նկ. 4, Մատենադարան, Հմր 206, 439բ: Եսայի Նչեցի:



Նկ. 5, Մատենադարան, Հմր 206, 440ա: Թորոս Տարոնացի:

Նկ. 6, Մատենադարան, Հմր 6289, 141ա: Եսայի Նչեցի և Ներսես Մշեցի: